# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**17 սեպտեմբերի 2018 թվականի N 267-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 323-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի դեկտեմբերի 29-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ներքին աուդիտի 2018-2020 թվականների ռազմավարական և 2018 թվականի տարեկան ծրագրերը վավերացնելու մասին»* N 323-Ա որոշման N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) 31-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

2) 30-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 30.1-րդ կետը.

«

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **30.1** | «Արովյանի Վ. Համբարձումյանի անվան N 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | Համակարգի գնահատման աուդիտ | 6 | 25/09/2018 | 02/10/2018 | Ներկայացված ֆինանսական և այլ բնույթի հաշվետվություններում տեղ գտած տեղեկությունների արժանահավատության և դրանց ստանդարտների կիրառելի հիմնադրույթներին համապատասխանության գնահատում | Արամ Գրիգորյան | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 2 |
| | | | | | | Կազմակերպության կողմից կատարված փաստացի և դրամարկղային ծախսերի հիմնավորվածության գնահատում | Արամ Գրիգորյան | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 4 |
| | | | | | | Կազմակերպության հաշվեկշռում գտնվող գույքի (ապրանքի) վարձակալությամբ տրամադրման, վարձավճարների հաշվարկման և գանձման գործընթացների գնահատում | Արգամ Առաքելյան | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 3 |
| | | | | | | Կազմակերպության կողմից վերադաս մարմնին ներկայացված կոմունալ վճարումների | Անահիտ Ստեփանյան | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 2 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հավաստիության գնահատում | | |
| | | | | | | Կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրման գործընթացի գնահատում | Արգամ Առաքելյան | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 3 |
| | | | | | | Գնման ընթացակարգերի արձանագրություններում տեղ գտած տեղեկությունների, պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների պայմանագրին համապատասխանության գնահատում | Կոմիտաս Հոնանյան | Ներքին աուդիտի բաժնի պետ | 4 |
| | | | | | | Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների հաշվարկման և վճարման գործընթացի գնահատում | Անահիտ Ստեփանյան | Ներքին աուդիտի բաժնի աշխատակից | 4 |

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի սեպտեմբերի 17
ք. Հրազդան